

ՖԱԴԷՅ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ,

1996ը վնոական տարի էր ՀՀ գիտութեան համար

ԵՐԵՒԱՆ («Նոյեան Տա-
պան»).- Հայաստանի Գիտու-
թիւններու Ազգային Ակադեմի-
այի (ԳԱԱ) նախագահ Ֆադէյ
Սարգսեան, Երեւնաթի, 7 Յուն-
ուարին, լրագրողներու հետ
հանդիպում մը ունենալով
ըսաւ, թէ դրական գնահատեց
անցնող տարուան ընթացքին
գիտական իրագործումները
Հայաստանի մէջ:

ԳԱԱի համար 1996ը վնոա-
կան տարի նկատելով, ան իր
գոհունակութիւնը յայտնեց մա-
նուանդ Ռուսիոյ եւ ԱՊՀի ան-
դամ երկիրներու հետ իրենց գի-
տական կապերու աշխուժացման
համար: Կապեր հաստատուած
են նաեւ Մ. Նահանգներու, Անգ-
լիոյ, Ֆրանսայի, Իրանի եւ Զի-
նաստանի գիտական մեծ կեդ-
րոններու հետ: Միացեալ ծրա-
գիրներու բնագաւառէն ներս,
հանգային հում նիւթերու որո-
նումներուն առընթեր, եղած են
նաեւ աժան նիւթեր ստեղծելու
ուսումնասիրութիւններ:

Բժշկական մարզէն ներս
իրագործուած են խորհրդատր-

ւական փոխանցման ծրագիր-
ներ, իսկ Հունգարիոյ Գիտու-
թիւններու Ակադեմիային հետ
գիտնականներու փոխանակ-
ման պայմանագիր կնքուած է:

1996ին, հայ գիտնականները
մասնակցած են միջազգային
շարք մը համաժողովներու, իսկ
Հայաստանի ԳԱԱն առանձինն
կազմակերպած է շուրջ 13 գի-
տաժողովներ, որոնց մասնակ-
ցած են նաեւ արտասահմանէն
կարեւոր մասնագէտներ:

Ֆ. Սարգսեանի գնահատու-
մով, միջազգային կապերու
շնորհիւ ոչ միայն կը պահպան-
ւի ՀՀ գիտական ներուժը, այլ
նաեւ կը զարգանայ Հանրապե-
տութեան անհրաժեշտ գիտա-
կան ուղղութիւններու զարգա-
ցումը, որոնց համար նախա-
տեսուած է գումարներ յատ-
կացնել պետական գանձէն:

Եզրակացնելով, Ֆ. Սարգս-
եան վստահեցուց, որ «մենք
կ'անենք ամէն բան, որպէսզի ոչ
միայն պահպանենք, այլ նաեւ
բազմապատկենք հայկական
գիտութեան նուաճումները»: